ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2022 թ.
№ 19 (1098)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստում

Մանկավաժական համալսարանում դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ Հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստը: Խորհրդի անդամները դիտեցին բուհի գործունեության մասին պատմող տեսաֆիլմը, որը պատրաստել էր Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը, ապա լսեցին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանի զեկուցումը հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների մասին:

Ռեկտորը բուհի անունից շնորհավորեց Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանին՝ ԿԳՄՍ նախարարի պաշտոնում նշանակվելու առթիվ և վստահեցրեց, որ համալսարանն ամենայն պատասխանատվությամբ կշարունակի իրականացնել կրթության որակի բարձրացմանն ուղղված գործընթացները:

Ռեկտորը նշեց, որ հոբելյանական տարին առանձնահատուկ էր բուհի համար՝ բազմաթիվ միջոցառումներով և նոր ձեռքբերումներով:

Ռեկտորն անդրադարձավ համալսարանի 2022-2025 թթ. ռազմավարական ծրագրի մշակմանը, ինչպես նաև Խորհրդի կողմից նրա հաստատմանը, կարևորեց բուհում մասնագիտական կրթական ծրագրերի ամբողջական վերանայումն ու կրթական վերջնարդյունքների համապատասխանեցումը ՀՀ կրթության մինչև 2030 թ. ռազմավարական ծրագրի հայեցակարգին, որակի ապահովման ներքին համակարգի վերափոխմանը, գիտահետազոտական գործունեությանն ու միջազգային գործընթացներին, շեշտելով, որ հաշվի են առել ժամանակի մարտահրավերները՝ հատկապես բնագիտության ոլորտում:

Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունը և Խորհրդի հաստատմանը ներկայացրեց 2023 թվականի բյուջեի նախահաշիվը:

Ռեկտորը բուհի ֆինանսական շարժը դրական գնահատեց, նաև հավելեց, որ ֆինանսական միջոցները փորձում են արդյունավետ օգտագործել:

Անդրադառնալով մի շարք հարցերի՝ Խորհրդի նախագահը նշեց. «Մանկավարժության ոլորտում պետք է վերանայել պետական ֆինանսավորման քաղաքականությունն ու մոտեցումները: Մանկավարժական համալսարանը պետք է լինի առանձին հոգածության ներքո»:

Խորհուրդը միաձայն հաստատեց ինչպես ընթացիկ տարվա տարեկան և ֆինանսական հաշվետվությունը, այնպես էլ ՀՊՄՀ-ի 2023 թվականի բյուջեն:

Խորհրդի նիստում հաստատվեց նաև ՀՊՄՀ 2023 թվականի հաստիքացուցակն ու կառուցվածքային փոփոխությունները, որը ներկայացրեց բուհի Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, որն ընդգծեց՝ փոփոխությունները պայմանավորված են բուհի առաքելությամբ, ռազմավարությամբ, մանկավարժական կրթու-թյան առջև ծառացած ժամանակի մարտահրավերներով

Ռեկտոր Գևորգյանը, բուհի մեկդարյա հոբելյանի առթիվ, ՀՊՄՀ-ում ներդրած ավանդի և ակտիվ փոխգործակցության համար «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրեց Խորհրդի անդամներ, բուհի նախկին ռեկտոր, պրոֆեսոր Էդուարդ Ղազարյանին և Միջազգային համագործակցության բաժնի նախկին պետ Քրիստինա Ծատուրյանին:

Խորհրդի նախագահը նիստում անդրադարձավ Արցախում ստեղծված հումանիտար աղետին, արցախցի ուսանողների կրթության խնդիրներին և հորդորեց բուհին՝ իր ձայնը լսելի դարձնել գործընկերների շրջանում, միջազգային հնարավոր բոլոր հարթակներում:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն հայտնեց բուհին՝ ընթացիկ տարում կատարած մեծածավալ աշխատանքի, գիտակրթական կարևոր ձեռնարկների իրականացման համար ու մաղթեց, որ հաջորդ տարին ամփոփվի առավել մեծ արդյունքներով, խաղաղ և տոնական տրամադրությամբ:

Խաղաղություն, սեր և ամենայն բարին եմ մաղթում ընտրյալի հոգեբանությամբ նոր տարի ոտք դնող ամեն մի հայ մարդու, ամեն մի հայ մանկավարժի: Զարգացում ու առաջընթաց՝ 100-ամյա Մանկավարժականին: Խաղաղություն մեր Հայրենիքին ու նրա սահմաններին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Օնունդ:

Կայացավ «Լավագույն ուսանող» մրցույթը

Մանկավարժական համալսարանի ուսանողական խորհուրդն արդեն 12 տարի իրականացնում է «Լավագույն ուսանող» մրցույթը: Մրցույթին մասնակցում են այն ուսանողները, որոնք առնվազն 4 կիսամյակ անընդմեջ ՀՊՄՀ-ում են սովորել, ունեն գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն, տիրապետում են օտար լեզուների, ներգրավված են գիտական կամ ստեղծագործական աշխատանքներում և ունեն օրինակելի վարք:

Այս տարի մրցույթի մրցանակաբաշխության արարողությունը կայացավ Աղավնաձորի ուսումնական բազայում: 10 ֆակուլտետների «Լավագույն ուսանողներին» շնորհավորեց և մրցանակ հանձնեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Պարգևատրման արարողությունից հետո հայտնի դարձավ հաղթողի անունը: ՀՊՄՀ «Լավագույն ուսանող 2022» ճանաչվեց Օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 2րդ կուրսի ուսանողուհի Նանե Պետրոսյանը:

Այս տարվա լավագույնները 3-օրյա հանգիստը կանցկացնեն Վրաստանի Հանրապետությունում:

Ամփոփեցին հոբելյանական տարին

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ տարեվերջյան Գիտական խորհրդի նիստը, որտեղ լսեցին համալսարանում 2022 թվականին իրականացված աշխատանքների և 2023 թվականի բյուջեի մասին հարցերը:

ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանն օրակարգային հարցերին անդրադառնալուց առաջ 100-ամյակի առթիվ պարգևներ շնորհեց մի շարք երախտավորների՝ վարչակառավարչական, գիտամանկավարժական, երիտասարդ կադրեր պատրաստելու, մասնագիտական բեղուն աշխատանքի համար:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանին ռեկտորը շնորհեց համալսարանի բարձրագույն՝ ,Խաչատուր Աբովյանե մեդալ:

Ռեկտորը «Խաչատուր Աբովյան» մեդալներ շնորհեց պրոֆեսորներ Սամվել Խուդոյանին (հետմահու), Մնացական Մանուկյանին, Վարուժան Հովհաննիսյանին, իսկ

«Մանկավարժական համալսարան» մեդալներով պարգևատրեց Ռոբերտ Դաշյանին, Գևորգ Բաղդասարյանին, Բորիս Նահապետյանին, Սմբատ Լպուտյանին, Արմեն Էլբակյանին, Հայկ Ղազարյանին, Էդվարդ Կոկանյանին, Հասմիկ Հովհաննիսյանին, Վահան Սարգսյանին, Լյուդմիլա Ավանեսյանին՝ արժևորելով յուրաքանչյուրի աշխատանքը:

Մանկավարժական համալսարանի 100-ամյակի հուշամեդալների արժանացան մանկավարժական կրթության նվիրյալներ Ստեփան Գրիգորյանը, Ռուզաննա Սադոյանը, Գրետա Հակբյանը, Մարգուշ Միրումյանը, Նարինե Սահակյանը, Գևորգ Թադևոսյանը, Թերեզա Ազատյանը, Արուսյակ Հովհաննիսյանը, Տիգրան Պետրոսյանցը, Ռուզաննա Խաչատրյանը, Գագիկ Ստեփանյանի անվ. դպրոցի տնօրեն Գարեգին Ներսիսյանը:

ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյանն ընթերցեց Գիտական խորհրդի անդամների ուղերձը՝ Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանին ,Խաչատուր Աբովյանե բարձրագույն պարգևի արժանացնելու կապակցությամբ:

Ներկաները դիտեցին համալսարանի հաշվետվությունը ներկայացնող ֆիլմ:

Ռեկտորը ներկայացրեց համալսարանում 2023 թվականին իրականացված աշխատանքների և բյուջեի մասին հաշվետվությունը՝ փաստելով՝ այն նշածողը, որ սահմանել է համալսարանը, իրատեսական է:

Օրակարգի երկրորդ հարցը վերաբերում էր ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի հաշվետվությանը, որը ներկայացրեց կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը:

Բուհի ղեկավար Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց բոլորին հոբելյանական տարում ակտիվ աշխատանքի և բազմաբնույթ միջոցառումների համար, շնորհավորեց գալիք Ամանորի առթիվ՝ մաղթելով սեր ու ջերմություն բոլորի ընտանիքներին, խաղաղություն երկրին և բոլորին, քանզի այդ ներքին խաղաղությամբ են պայմանավորվելու 100-ամյա համալսարանի նոր ձեռքբերումները:

ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոն

Անդրադարձան կրթության կառավարման ոլորտին

Բուհի 100-ամյակը համալսարանական ստորաբաժանումների գործունեությունն ամփոփելու լավագույն հնարավորություն է: Ստորաբաժանումների ղեկավարներն ամփոփում են կատարված աշխատանքը, անդրադառնում առանցքային խնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ արվածին ու անելիքներին:

Համալսարանի ղեկավարների հերթական հանդիպումը Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի աշխատակազմի հետ էր:

Ամբիոնի վարիչ Ռիտա Գևորգյանը ամփոփ ներկայացրեց համահամալսարանական ամբիոնի առաքելությունն ու գործունեությունը, համագործակցությունը տարբեր ֆակուլտետներում տնտեսագիտական առարկաներ դասավանդող դասախոսների հետ, ընդգծելով տնտեսագիտության և կառավարման ոլորտում դասավանդվող հասարակագիտություն, արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, տեխնոլոգիա և ձեռնարկչություն առարկաների շրջանակում կրթական ծրագրերով տարվող աշխատանքը:

Ամբիոնը մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում պատրաստում է և կրթության և մշակույթի ոլորտի կառավարման մասնագետներ:

Ռիտա Գևորգյանը ներկայացրեց դասախոսական ներուժի՝ տեսական և պրակտիկ աշխատանքը, միջոցառումների շարքում առանձնացրեց բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակում իրականացված երկու միջոցառում, որին մասնակցեցին ոչ միայն ուսանողները, այլև ոլորտում կայացած շրջանավարտներ:

Տարբեր սեմինարների, կոնֆերանսների ընթացքում, մասնավորապես Ղրղզըստանում, Փարիզում, Մալթայում, ամբիոնի դասախոսները անդրադարձել են կրթության կառավարման ոլորտի առանձնահատկություններին:

Ամբիոնի վարիչն անդրադարձավ բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում ամբիոնի դասախոսների հոդվածների, տարվա ընթացքում 3 ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրությանը:

Արդյունավետ են կրթական և մշակութային հաստատությունների հետ միջազգային համագործակցային կապերը, մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների շարժունության ծրագրերին:

Ռիտա Գևորգյանն ամբիոնի ձեռքբերումները պայմանավորեց համալսարանի ղեկավարության կողմից ցուցաբերված մեծ աջակցությամբ՝ շնորհակալություն հայտնելով հոբելյանական տարում իրենց աշխատանքը գնահատելու համար:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը բուհի հոբելյանի կապակցությամբ շնորհավորեց ամբիոնի աշխատակազմին, որն անմասն չի մնացել համալսարանի որակական ձեռքբերումներից: Նա ընդգծեց, որ ժամանակի փոփոխություններին ու մարտահրավերներին համահունչ պետք է հանդես գալ մանկավարժական կրթության ոլորտի նոր մոտեցումներով ու նոր մեթոդաբանությամբ:

Ռեկտորն ընդգծեց, որ ամբիոնի իրականացրած ծրագրերը յուրահատուկ են մենեջերների պատրաստման առումով, և պետք է առանձնակի ուշադրություն դարձնել կրթության կառավարման ոլորտի փոփոխություններին, քանի որ սերունդը փոխվել է, որի արդյունքում ունենք հոգեֆիզիոլոգիական և այլ խնդիրներ:

Ռեկտորն ընդգծեց՝ ամբիոնը պետք է փոփոխությունների և ռազմավարական պահանջների շրջանակում հաշվի առնի բոլոր խնդիրներն ու բացթողումները և նորանոր ձեռքբերումներ գրանցի նոր 100-ամյակում:

Ռեկտորը 100-ամյակի հուշամեդալ շնորհեց Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի վարիչ Ռիտա Գևորգյանին, իսկ մի խումբ դասախոսների պատվոգրեր ու շնորհակալագրեր հանձնեց:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

Դպրոցը հնարավոր չէ պատկերացնել առանց բնագետների

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանի հերթական հանդիպումը Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ էր:

Դեկան Ռուզաննա Սադոյանը ներկայացրեց իր ղեկավարած ֆակուլտետը, որը համալսարանի 100-ամյա պատմության 85-ամյա ուղեկիցն է: Դեկանը նշեց, որ նման հուզումնալից պահեր քիչ են լինում. չէ՞ որ բուհի մեկդարյա պատմության հոբելյանական միջոցառումների ականատեսն են և մասնիկը:

Նա հիշեց 1938-1939 ուստարում հիմնադրված ֆակուլտետի՝ տարիների ընթացքում անվանումների ու կառուցվածքային փոփոխությունները, երախտավորներին, որոնց ուսանողներն այսօր դասավանդում են ֆակուլտետում. նրանցից մեկն էլ ինքն է:

Դեկանը հպարտությամբ խոսեց այն ներուժի մասին, որ ունի ֆակուլտետը՝ գիտությունների 10 դոկտոր, 25 թեկնածու և 1 ակադեմիկոս, միաժամանակ ցավով նկատեց՝ բնագիտական ուղղվածությամբ մասնագիտություններն այսօր գրավչություն չունեն, թեև առանցքային են ու շատ կարևոր երկրի զարգացման ու առաջընթացի համար:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանի հիշողություններում թարմ են բնագիտական թեքումով ֆակուլտետի տարբեր մասնագետների հետ շփումները: Նա ընդգծեց՝ բուհի 100-ամյա պատմության մեջ առանձնահատուկ է այս ֆակուլտետի դերը բնագետների պատրաստման գործում, ինչպես և տարբեր ու յուրահատուկ են յուրաքանչյուրի փոխներգործումները:

Պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը խոսեց սերնդափոխության ընթացքում մի շարք ձեռքբերումների, նաև ժամանակի մարտահրավերների մասին, երբ երեխաների խաղերը տեղափոխվել են տեխնոլոգիական հարթակ՝ բացասական ազդակներ ներմուծելով նոր սերնդի հոգեբանություն ու զգայական աշխարհ: Պետք է հասկանալ՝ մեթոդական զինանոցում ինչ ունենք՝ դիմակայելու վերոհիշյալին և լուծելու դրանով պայմանավորված մանկավարժական արդի հիմնախնդիրները:

«Այսօր դպրոցը հնարավոր չէ պատկերացնել առանց քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության ուսուցչի, և այս ոլորտում օպտիմալացումը բացառվում է»,-ասաց ռեկտորը՝ ներկայացնելով այն առաջարկությունները, որ արվել է համալսարանի ղեկավարության կողմից՝ բնագիտական առրկաների ու մասնագիտությունների նախկին գրավչությունը բարձրացնելու համար:

Ռեկտորը լիահույս է՝ պետք է կյանքի կոչել սեղանին դրված բոլոր փոփոխությունները, և դրանք պետք է լինեն ժամանակին ու բուհի գործունեությանը համահունչ:

Եվ վերջում նա ֆակուլտետի անձնակազմին մաղթեց՝ նոր 100-ամյակ մտնել նոր ձեռքբերումներով:

Գիտական խորհրդի որոշմամբ պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը բուհի բարձրագույն պարգև՝ «Խաչատուր Աբովյան» մեդալ շնորհեց դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Թանգամյանին, ինչպես նաև՝ «Մանկավարժական համալսարան» մեդալ՝ Լյուդմիլա Ավանեսյանին և Աշոտ Բաբախանյանին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակի հուշամեդալներով պարգևատրվեցին Գևորգ Կարապետյանը, Սամվել Պիպոյանը:

Մի խումբ դասախոսներ և աշխատակիցներ պատվոգրերի և շնորհակալագրերի արժանացան:

Երախտիքի խոսք ասացին երկարամյա դասախոսներ Տիգրան Թանգամյանը, Գևորգ Կարապետյանը և Սամվել Պիպոյանը:

Կուլտուրայի ֆակուլտետ

«Երբ ուսուցիչը գնահատվում է՝ նշանակում է ազգը, հայրենիքը ապրում են»

Կուլտուրայի ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանը համալսարանի հոբելյանի համատեքստում ներկայացրեց ֆակուլտետը, որի տարեգրության մեջ մշակույթի անվանի գործիչների գործունեությունն է և ստեղծած ավանդույթները, որի շարունակողներն այսօր ֆակուլտետի լավագույն մասնագետներն են: Նրանց շնորհիվ ֆակուլտետի շրջանավարտները մեծ ճանաչում են ձեռք բերել մասնագիտական տարբեր ասպարեզներում:

«Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետը մշակութային կրթության առաջատարն է հանրապետությունում. նրանք երկար տարիներ իրականացնում են մշակութային կրթության առաքելությունը»,-ասաց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ բուհի հիմնադրման 100-ամյակի առթիվ շնորհավորելով ֆակուլտետի բոլոր աշխատողներին:

Նա ընդգծեց՝ համալսարանի հոբելյանին նվիրված հրաշալի գալա համերգը ևս Կուլտուրայի ֆակուլտետի հետ համատեղ ուժերով կազմակերպված աշխատանք էր, որտեղ ի մի էր բերվել համալսարանի պատմությունն ու առաքելությունը:

Ռեկտորը բրենդային համարեց ֆակուլտետը և մասնագետներին, մերօրյա նվիրյալներին, որոնք շարունակում են ֆակուլտետի երախտավորների թողած հսկայական ժառանգությունը, իրենց գործունեությամբ շարունակում մշակութային ավանդույթները:

Ռեկտորը մեկ անգամ ևս մատնանշեց «365 օր ուսուցչի և աշակերտի կողքին», և «100 տարի սովորեցնում ենք սովորեցնել» կարգախոսները, որոնց ներքո կազմակերպվել են հոբելյանական տարվա բոլոր ձեռնարկները, և ըստ որի մշակութային ֆակուլտետը պիտի ուրվագծի իր աշխատանքի նոր տեսլականը:

Համալսարանի ղեկավարը բարձրաձայնեց՝ ունենք արդյունք, խնդիրներ, նվաճումներ ու բացթողումներ… Մշակույթի ոլորտը հատուկ իմացական ոլորտ է, հատուկ իմացական պահանջմունք, արժեբանություն, որը մասնագետներն ավելի շուտ են նկատում, քան մենք՝ մեր քննարկումներում՝ այն արժեբանությունը, որի ներքո պիտի զարգացնենք մեր մշակութային ինքնության, հայի ինքնության տեսլականը: Այդ տեսանկյունից ռեկտորը կարևորեց լեզվի, պատմության, մշակույթի տիրույթը, որում ստեղծված հարացույցը պետք է դառնա հաջորդ 100-ամյակի գործունեության հիմքը:

Ռեկտորը «Մանկավարժական համալսարան» մեդալներ շնորհեց պրոֆեսորներ Հակոբ Ավետիքյանին, Աիդա Հովհաննիսյանին և դոցենտ Գոհար Աբրահամյանին:

«52 տարվա ուսուցիչ եմ և 47 տարվա լրագրող,-ասաց Հ. Ավետիքյանը, բայց ունենալով լրագրության ոլորտի բոլոր պարգևները, ուսուցչական ասպարեզի որևէ պարգև չունեի:

Ցավոք, ուսուցիչն այսօր անտեսված է, երբ նա գնահատվում է՝ նշանակում է ազգը, հայրենիքը ապրում են»:

Պրոֆեսոր, ռեժիսոր Աիդա Հովհաննիսյանն էլ նկատեց՝ մշակույթի ոլորտի աշխատողներս չենք ծառայում ֆակուլտետն, ծառայում ենք արվեստին, Մանկավարժական համալսարանին, Հայրենիքին:

Վերջում ֆակուլտետի երաժշտության ամբիոնը երաժշտախմբերի կողմից ներկայացվեց համերգային հագեցած ծրագիր:

ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Օտար լեզուների ֆակուլտետ

Ցանկացած պարգև թիմային աշխատանքի համար է

Համալսարանի ղեկավարները դեկտեմբերի 22-ին հանդիպեցին Օտար լեզուների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ՝ ամփոփելու տարին:

Ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը շնորհակալություն հայտնեց նման բարդ ժամանակահատվածում ֆակուլտետում հյուրընկալվելու համար և ընդգծեց՝ հատկապես մանկավարժության ոլորտում ցանկացած պարգև թիմային աշխատանքի համար է, և շնորհակալություն հայտնեց ղեկավարությանը՝ ֆակուլտետն ըստ արժանավույն գնահատելու համար:

Ռեկտորը շնորհավորեց բոլորին՝ բուհի հիմնադրման 100-ամյակի առթիվ՝ նշելով, որ ֆակուլտետի յուրաքանչյուր անդամ իր ներդրումն ունի բուհի ավանդույթների պահպանման և զարգացումների ընթացքի մեջ, այն բուհի, որը բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում շարունակում է յուրաքանչյուր օր վերընթաց ապրել:

«Սերնդի կրթության, պատրաստման և սոցիալականացման խնդիրը թերևս այն կարևորագույն ոլորտն է, որն ապահովում է երկրի անվտանգությունը. այդ տեսանկյունից ձեր առջև դրված խնդիրները բարդ են, որովհետև հենց այդ խնդիրների լուծմամբ ենք մենք ունենում վաղվա քաղաքացու կերպար և արժեհամակարգ»:

Ռեկտորը փաստեց՝ ֆակուլտետն ունի հզոր ներուժ, որը գործում է հատուկ մեթոդների ու մասնավոր մեթոդիկաների ընտրությամբ, կրթությունը, ուսուցումը նաև հատուկ մասնագիտական ձեռագրաբանությունն է այն սոցիալական փոխազդեցության ու ներազդման ներքո, որի արդյունքում մենք որոշակի որակ ենք ունենում:

Ռեկտորը նշեց, որ այդ տեսակյունից ֆակուլտետն աչքի է ընկնում մանկավարժական խնդիրների բարձրացման հանդեպ իր հատուկ որակական մոտեցումներով:

Ռեկտորը շնորհավորեց բոլորին բուհի մեկդարյա փուլի, զարգացումների ու ավանդույթների ամփոփման առթիվ և մի խումբ դասախոսների և աշխատողների պարգևներ հանձնեց:

Ռեկտորը Օտար լեզուների ֆակուլտետի որոշմամբ «Խաչատուր Աբովյան» համալսարանի բարձրագույն պարգևը շնորհեց բուհի գործընկեր Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի պրոֆեսոր Ռաունի Ռազանենին, որի թիմի աշխատանքով Մանկավարժական համալսարանում վերանայվեցին մասնագիտական կրթական ծրագրերն ու կատարվեցին առարկայական նկարագրերի բովանդակային փոփոխություններ, ունեցանք փորձառություն, դասախոսների և ուսանողների փոխանակում:

Մանկավարժական գործունեության, նվիրումի, մասնագիտական կադրերի պատրաստման, բուհի միջազգային կապերի ընդլայնման գործում ներդրման համար «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրվեց Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տիգրան Միքայելյանը:

Ռեկտորը «Մանկավարժական համալսարան» մեդալներ շնորհեց Արմեն Ագուլյանին, Սվետլանա Ադամովային, Ազգանուշ Ասատրյանին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան 100-ամյակի հուշամեդալների արժանացան ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը, Էվելինա Բայաթյանը, Նուշիկ Հայրապետյանը:

Պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատողների մի խումբ էլ արժանացավ պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Ռեկտորը բոլորին մաղթեց խաղաղ ու ստեղծագործական աշխատանք գալիք հարյուրամյակում:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

Սերունդների համերաշխության մեջ է կարգացման կրամաբանությունը

100-ամյակը կյանքում մեկ անգամ է լինում. մենք մեր բուհի հոբելյանը նշեցինք հրաշալի նշեցինք: Տոնական տրամադրությունը հասել է ֆակուլտետներ:

Դեկանն ընդգծեց, որ ֆակուլտետը գրեթե համալսարանի հասակակիցն է, և համալսարանի հաջողությունների մի մասը պայմանավորված է հենց այս ֆակուլտետի գործունեությամբ:

«Թույլ տվեք ասել, որ տարիներ շարունակ մեր ֆակուլտետը եղել է հանրապետությունում առանցքային հայագիտական կենտրոն: Մեր ֆակուլտետը ինքնատիպ է նրանով, որ այստեղ ոչ թե ուսումնասիրում են առարկաներ, այլև կերտում են պատմություն, որովհետև ֆակուլտետի երախտավորները շրջադարձային կարևոր դեր են ունեցել ոչ միայն գիտության և կրթության, այլև երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Այդ իմաստով Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը եղել և շարունակում է մնալ ինքնատիպ, որն ունի հսկայական իրացված և չիրացված ներուժ և պատրաստ է իր ներդրումը բերել բուհի հաջորդ 100-ամյակի զարգացմանը»:

Դեկանն ընդգծեց ֆակուլտետի հատկապես միջազգային կապերի ընդլայնման աննախադեպությունը, նաև հպարտությամբ նշեց, որ իր կողքին կանգնած են իր ուսուցչները, հասակակից գործընկերները և ուսանողները, և որ երեք սերունդների համերաշխության մեջ է ֆակուլտետի զարգացման տրամաբանությունը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը համալսարանի ղեկավարության անունից շնորհավորեց բոլորին հոբելյանի առթիվ: Ռեկտորն ընդգծեց ֆակուլտետի առանցքային և ակտիվ դերը:

«Ֆակուլտետի դասախոսական կազմը ներկայացնում է տարբեր սերունդների, սակայն անփոփոխ է ուսուցչի առաքելությունը»,-ասաց ռեկտորը:-Գլոբալիզացիայի պայմաններում երբեմն չենք կարողանում հասկանալ յուրաքանչյուրիս համար ձեռքբերումների այն ճանապարհը, որը պիտի պայմանավորի ճիշտ արժեհամակարգի զարգացման ուղղորդումը»:

Սրբուհի Գևորգյանը ևս մեկ անգամ ընդգծեց մշակութային ինքնության պահպանման խնդիրը, անդրադարձավ ուսուցման արդի խնդիրներին ու կրթության արժեբանությանը՝ ասելով, որ հենց այս ֆակուլտետի հասարակական ոլորտի մասնագետները պիտի հստակորեն ցույց տան մանկավարժի ձևավորման ճանապարհը, սերունդների փոփոխության պայմաններում օգնեն հասկանալու մանկավարժության մեթոդաբանությունը նոր 100-ամյակում:

Մենք հաճախ խուսափում ենք գովեստի խոսքեր ասել, ներկայացնել լավ աշխատանքը, բայց այս հոբելյանական տարին հնարավորություն է տալիս արժևորել յուրաքանչյուրի աշխատանքը, ով ջանք չի խնայում համալսարանի զարգացմանը նպաստելու համար: Եվ ժամանակն է առերեսվելու իրականությանը, ներկայացնելու անհատականություններին, որոնց շնորհիվ ունենք որակ, որոշակի մոտեցումներ ու մասնագիտական կարողություններ:

Ռեկտորն իր խորին երախտագիտությունն արտահայտեց ֆակուլտետի ղեկավարության և տարբեր տարիների ֆակուլտետը ղեկավարած երախտավորների գործունեության հանդեպ:

Ռեկտորը, Գիտական խորհրդի որոշմամբ, գիտական և երիտասարդ կադրերի պատրաստման գործում ունեցած ներդրման համար «Խաչատուր Աբովյան» համալսարանի բարձրագույն մեդալ շնորհեց Էդիկ Գևորգյանին, ինչպես նաև «Մանկավարժական համալսարան» մեդալներով պարգևատրեց Լևոն Սիմոնյանին, Ավետիս Հարությունյանին, Արամ Քոսյանին, Խաչատուր Ստեփանյանին, Լևոն Շիրինյանին՝ ընդգծելով յուրաքանչյուրի որակական և մասնագիտական ներդրումը:

Մանկավարժական համալսարանի 100-ամյակի հուշամեդալով պարգևատրվեցին Աշոտ Փիլիպոսյանը, Հայկ Գրիգորյանը, Սամվել Պողոսյանը:

Մի խումբ դասախոսներ և աշխատակիցներ արժանացան պատվոգրերի և շնորհակալագրերի:

Աշխատանքի գնահատականը նաև պարտավորեցնող է, պետք է կարողանանք արդարացնել՝ նկատեց դեկանի տեղակալ Խաչատուր Ստեփանյանը:

Մանկավարժության համահամալսարանական ամբիոն

Առաքելությունը՝ ծառայել դպրոցին և ուսուցչին

Մանկավարժության ամբիոնն ընդլայնված նիստ էր հրավիրել, որին մասնակցում էին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանը, Մարիամ Իսպիրյանը և Մարիաննա Հարությունյանը, դեկան Հեղինե Խաչատրյանը, ամբիոնների, ռեկտորատի վարչությունների և բաժինների ղեկավարներ, դպրոցների տնօրեններ, շրջանավարտ ուսուցիչներ, ամբիոնի բարեկամներ:

Օրակարգում առաջինն ամփոփեցին ամբիոնի՝ հոբելյանական տարվա աշխատանքները:

Սիդա Թոփուզյանը տեսահոլովակի միջոցով ներկայացրեց. «1922 թվականի նոյեմբերի 7-ին ստեղծվեց Մանկավարժական բուհը, որն ուներ միայն Մանկավարժական ֆակուլտետ՝ նախադպրոցական, դպրոցական և արտադպրոցական մասնագիտություններով: Ընդհանուր մանկավարժության ամբիոնը գործում է համալսարանի հիմնադրման օրվանից՝ Մանկավարժության ֆակուլտետի կազմում»:

Ամբիոնի վարիչը փաստեց՝ Մանկավարժության ամբիոնն ինստիտուտի հնագույն ամբիոնն է, տարիներ շարունակ մանկավարժության ոլորտի համար գիտական կադրերի պատրաստման գործում նշանակալից դեր են ունեցել մանկավարժության ամբիոնի վարիչներ Գուրգեն Էդիլյանը, Արշավիր Շավարշյանը, Մուշեղ Սանթրոսյանը, Հրաչյա Քարամյանը, Արամ Բալյանը, Տելեմաք Վարդումյանը, Գրիգոր Նազիրյանը, Սամվել Մովսիսյանը, Վահե Հարությունյանը, մեր օրերի ամբիոնի վարիչներ են եղել Մնացական Մանուկյանը, Արուսյակ Հովհաննիսյանը, Լաուրա Ասատրյանը, Սիդա Թոփուզյանը:

Սիդա Թոփուզյանն անդրադարձավ ամբիոնի հիմնախնդիրներին, կազմակերպված գիտաժողովներին, որտեղ քննարկվող բոլոր թեմաներն էլ արդիական են եղել, ամբիոնին կից արդեն 5 տարի գործող մանկության ժամանակակից հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիային, նրա կողմից վերջին տարիներին լույս տեսած ուսումնամեթոդական ձեռնարկներին:

«Ամբիոնը լաբորատորիայի միջոցով կատարում է իր հիմնական առաքելությունը՝ ծառայել դպրոցին, ծառայել ուսուցչին»,-ասում է ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը:

Ամբիոնի աշխատակազմը զգում է ժամանակի շունչը, քայլում ժամանակին համընթաց. ամբիոնի բոլոր դասախոսները մասնակցել են վերապատրաստման դասընթացներին, մի շարք դասախոսներ մասնակցել են «Հաջողության բանաձև» հաղորդաշարին, ամբիոնը վերջին մեկ տարում սերտ կապեր է հաստատել Հայաստանում մեծահասակների կրթության միջազգային կազմակերպության հայկական մասնաճյուղի հետ, կազմակերպել համատեղ միջոցառումներ:

Ստորաբաժանման ղեկավարն անդրադարձավ ավանդական դարձած քարոզների մրցույթին, մանկավարժական օլիմպիադաներին, երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը, պրակտիկայի ընթացքում ստեղծված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսին, ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովին:

Սիդա Թոփուզյանը նշեց, որ հոբելյանական տարին հագեցած էր միջոցառումներով, որոնք անց էին կացվում «365 օր դպրոցում՝ աշակերտի և ուսուցչի հետ» կարգախոսով, մատնանշեց հանրակրթական տարբեր դպրոցներում բուհի շրջանավարտների մասնակցությամբ համատեղ անցկացված միջոցառումները: 100-ամյակի միջոցառումներն ամբիոնն ամփոփել է գիտական կոնֆերանսով:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը խոսեց բուհի ստեղծման ակունքներում կանգնած ամբիոնի առանցքային նշանակության մասին, որը 100 տարի շարունակ սովորեցնում է սովորեցնել, գործառույթներով, մասնագետների բանիմաց սերնդով կատարում իր առաքելությունն ու ազգանպաստ գործունեությունը:

«Ժամանակները, կրթության մեթոդներն ու հայեցակարգերը տարբեր են եղել, սակայն առաքելությունը նույնն է մնացել՝ ծավալել ուսուցչի ազգապահպան գործընթաց՝ մատաղ սերնդի կողքին լինելու և համապատասխան արժեբանություն ձևավորելու առումով: Ամփոփելով մեկդարյա պատմությունը՝ ունենք արդյունքներ, որտեղ կրկին առաջնային է ամբիոնի դերակատարումը»:

Ռեկտորը հավելեց, որ ամբիոնի առաքելությունն է նաև. բուհի նոր հարյուրամյակում ստեղծել մանկավարժական գիտության նոր տեսլականը, որի ներքո իրականացվելու է նախադպրոցական, հանրակրթության, բարձրագույն մանկավարժական ոլորտի մասնագետների պատրաստման գործընթացը:

Համալսարանի ռեկտորը «Մանկավարժական համալսարան» մեդալներ շնորհեց Մանկավարժության ամբիոնի դասախոսներ Սուսաննա Սիսյանին, Գայանե Աղուզումցյանին, Հակոբ Թադևոսյանին, իսկ մի խումբ դասախոսների պատվոգրեր և շնորհակալագրեր հանձնեց:

Ընդլայնված նիստն ավարտվեց N 104 դպրոցի տնօրեն Նաիրա Մարտիրոսյանի և բուհի շրջանավարտ ուսուցիչների և աշակերտների ելույթով:

Նրանք արժանացել են համալսարանի բարձրագույն պարգևի՝ «Խաչատուր Աբովյան» մեդալի

Տիգրան Թանգամյան
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Այս պարգևն առանձնահատուկ է

Իմ գիտակցական կյանքի 60 տարին անցել է Մանկավարժական համալսարանում: Տարիների ընթացքում անընդհատ նկատել եմ բուհի վերընթացը, որի մեջ մեր ֆակուլտետն էլ իր համեստ ներդրումն ունի:

Աշխատել եմ 9 ռեկտորի և 6 դեկանի հետ: Մի ամբողջ կյանքի պատմություն է սա, աշխատանքային գործունեություն՝ փորձի և փորձառության հիանալի ճանապարհ:

Տարիների ընթացքում շատ պարգևներ եմ ստացել, սակայն այս պարգևն առանձնահատուկ է և յուրահատուկ. այժմ ես լիարժեք աբովյանական եմ: Ես սա վերագրում եմ համալսարանին, որն ինձ համար աշխատելու պայմաններ է ստեղծել, և իմ դասախոսներին՝ ակադեմիկոս Սահակ Կարապետի

Կարապետյանին, Վարդան Սահակյանին, Դուխիկ Չաթրջյանին և էլի շատերին, որոնց շնորհիվ այսօր գնահատվեց իմ վաստակը: Ես ինձ և գնահատված եմ զգում և զգում եմ, որ հին սերնդի ներկայացուցիչն այսօր ես եմ:

Գիտեմ՝ շատ անելիքներ ունենք, սակայն պետք է ասել, որ ֆակուլտետն ունի պրոֆեսորադասախոսական մեծ ներուժ, որը պատրաստակամ է առաջ մղելու բուհի առաջընթացը:

Յուրի Յուզբաշյան
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծայր բարձր եմ գնահատում այն պարգևը, որն իմ բուհն է տվել

-Պարոն Յուզբաշյան, հանրապետությունում երաժշտական կրթության զարգացումն անխզելիորեն կապված է Ձեր անվան հետ: Վեց տասնամյակից ավելի Ձեր կենսագրությունը կապվում է Մանկավարժականի հետ: Կներկայացնե՞ք այդ ճանապարհի տարբեր հանգրվաններում Ձեր գործունեությունը:

-1965 թվականից մինչև այսօր ես աշխատում եմ Մանկավարժականում: Մինչ այդ զբաղվել եմ ուսուցչությամբ, որն ինձ մեծ փորձ ու փորձառություն է տվել:

Դեռևս Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանի 3-րդ կուրսի ուսանող էի, երբ տնօրեն Մարտին Մազմանյանն ասաց, որ միաժամանակ պետք է աշխատենք: Երևանի N 3 դպրոցում սկսեցի աշխատել որպես երաժշտության ուսուցիչ և երգեցիկ խմբի ղեկավար: Դա 1956 թվականն էր: Սիրով աշխատում էի, տարեվերջին էլ Արմեն Տիգրանյանի հոբելյանի առթիվ երեխաների մասնակցությամբ «Անուշ» օպերայից հատվածներ բեմադրեցի:

Այսպես սկսվեց իմ առաջին տարին հանրակրթական դպրոցում: Այնուհետև ➤5

Էդիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար

100-ամյա բուհի հիմնական առաքելությունը հայ դպրության պահպանումն է

Առիթից օգտվելով ուզում եմ շնորհակալություն հայտնել ինձ բուհի «Խաչատուր Աբովյան» բարձրագույն մեդալ շնորհելու համար և շնորհավորել համալսարանի հոբելյանի առթիվ:

Մանկավարժական համալսարանն ինձ համար միայն բարձրագույն ուսումնական հաստատություն չէ, այն հարազատ օջախ է, կրթօջախ՝ ընտանիք դարձած, որի պատերի ներսում 1978 թվականից եմ՝ որպես ուսանող, մի կարճ ժամանակահատված էլ սովորել եմ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, ապա նորից վերադարձել մայր բուհ: Իմ հրապարակային ելույթներում ես համալսարանը մշտապես համարել եմ մայր բուհ՝ ամենևին չնսեմացնելով Երևանի պետական համալսարանի դերը:

Թե՛ Առաջին հանրապետության, թե՛ Խորհրդային Հայաստանի, թե՛ Երրորդ հանրապետության հասարակական-քաղաքական, մշակութային, գիտական կյանքում Մանկավարժական համալսարանն ինձ համար եղել է մայր բուհ, որի պատերի ներսում, իմ համոզմամբ, ժամանակին ստացել եմ լուրջ ուսումնառություն, որտեղ դասավանդել են ժամանակի նշանավոր գիտնականներ, հասարակագետներ, և պատիվ եմ ունեցել լինելու նման նշանավոր մարդկանց սանը: Հոբելյանը լավ առիթ է՝ երախտագիտության խոսք հղելու նման մեծերին՝ Լևոն Շահինյան, Վարդան Պարսամյան, Վարդգես Համազասպյան, Ֆրունզե Պողոսյան, Ալբերտ Քյուրքչյան, Արտաշես Պողոսյան, Զավեն Գրիգորյան և շատ ուրիշներ: Նրանք բոլորը բարձր պրոֆեսիոնալ հատկանիշներով օժտված մարդիկ էին: Ինձ համար էլ ավելի մեծ երջանկություն էր, ուսումնառությունն ավարտելուց 4-5 տարի հետո, դառնալ նրանց գործընկերը, որոնց հետ աշխատելը շատ հաճելի էր և ուսանելի:

Լևոն Շահինյանը Հայոց պատմության ամբիոնի վարիչն էր, դասավանդում էր հայոց պատմության հին և հնագույն շրջանը, իսկ ես նրա սեմինարիստն էի: Երբ նա առողջական խնդիրներ ուներ, ինձ մեկ-մեկ հանձնարարում էր իր փոխարեն դասավանդել հայոց պատմություն: Իմ ուսումնասիրությունները վերաբերում էին պատմության նորագույն շրջանին, և ես վախենում էի չկարողանամ, թեև դասախոսս ինձ խրախուսում էր՝ իմանալով իմ գիտելիքները:

Իմ կարգախոսն է մշտապես եղել՝ուր ենք մտնելու, ինչ ենք դասավանդելու, և որ դասախոսն ավելի շատ անհանգստանալու, վախենալու բան ունի, քան ուսանողը… Որովհետև ամբիոնի մոտ կանգնած դասախոսին գնահատողը ուսանողական նստարանին նստածն է: Այդ առումով ես երախտապարտ եմ իմ դասախոսներին, որոնց հետ լուրջ ճանապարհի անցա, իսկ ամենակարևորը, Մանկավաժական մայր բուհում, դեռևս ուսանողական տարիների սկզբից, ես առողջ աշխատանքային կոլեկտիվ եմ տեսել, լավ փոխհարաբերություններ: Թեև խորհրդային շրջանում նեգատիվ երևույթներ կային նաև բուհական համակարգում, ինչը ժխտելն անհնարին է, բայց նաև կային լուրջ հարաբերություններ, մանկավարժական մթնոլորտ, որին հասնելու համար դու լուրջ ճանապարհ պետք է անցնեիր: Այսօր այդ շեմը մի քիչ իջեցված է: Այսօր կարևորը բազային կրթությունն է, որը մասնագիտական է, առանց որի, որքան էլ տեխնոլոգիաների տիրապետես, դժվար կարողանաս լուրջ գիտելիքներ հաղորդել:

Մանկավարժական համալսարանն անցել է զարգացման լուրջ ճանապարհ, ես սա ասում եմ որպես պատմության նորագույն շրջանի հետազոտող, շատ լավ ծանոթ եմ բուհի պատմությանը, անցած փուլերին, որի ընթացքում բուհն ունեցել է լուրջ ձեռքբերումներ, և, աստիճանաբար հաղթահարելով դժվարությունները, այսօր դարձել է մանկավարժական կադրեր պատրաստող հիմնական դարբնոցը: Այս տեսանկյունից մենք պետք է երախտագիտության խոսք հղենք բոլոր ժամանակների այն մարդկանց, որոնք այդ հիմքերն ամրապնդել են: Սա շատ կարևոր է սերունդների համար:

Ես անկեղծորեն ուրախացա, որ 100-ամյակը նշվեց այս բուհի շրջանավարտ, այս բուհում իր աշխատանքային կենսագրությունը կերտած և առ այսօր շարունակող Սրբուհի Գևորգյանի ղեկավարությամբ: Կարևորն այն է, որ բուհն ավարտելով, դու դառնում ես նրա նվիրյալը, կարևորն այն արժեհամակարգն է, որը դու դնում ես և փորձում ես նրա հետևից գալ:

Ֆակուլտետը ղեկավարելու իմ 8 տարիները պայմանավորված էին ստեղծված իրավիճակով, երկրի անվտանգային համակարգով… Թեև դասախոսի աշխատանքն ավելի գրավիչ էր, և ինչ-որ տեղ նաև գնահատվող, և շատ արժեքային համակարգեր խաթարված չէին:

Ցանկացած դասախոսի գնահատականը կարող են տալ ուսանողներն ու շրջանավարտները. այս առումով ես շնորհակալ եմ, որ ունենք շրջանավարտներ, որոնք գնահատել գիտեն:

Մեզնից յուրաքանչյուրը պետք է անցյալից դասեր քաղի, որևէ պաշտոն երբեք հավերժ չէ, անփոխարինելի մարդիկ չկան…

Հիշենք բոլշևիկների շրջանի պրոլետկուլտի տարիները, երբ ամեն հինը ջնջում էին, որպեսզի ստեղծեն նորը… Սա բոլոր ժամանակներում մեր հասարակության ողբերգությունն է: Բացասման բացասումը փիլիսոփայության հիմնական օրենքներից մեկն է, որն ասում է՝ պետք է ջնջես հնից այն, ինչը քեզ օգտակար չէ, իսկ այն, ինչ հնում կար, որ օգտակար է, դու պետք է վերցնես…:

Խոսելով 20-րդ դարավերջի և 21-րդ դարի սկզբի բուհական կյանքի, մասնավորապես Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի մասին, ես միշտ հպարտացել եմ, որ մեզ դասավանդող դասախոսների մեծագույն մասը ինտենսիվորեն զբաղվել է գիտությամբ: Այսօր էլ, իհարկե, մեր ֆակուլտետի դասախոսները գիտաժողովներ են կազմակերպում, հոդվածներ տպագրում, ես ինքս էլ իմ համեստ ներդրումն ունեմ, հատկապես վերջին շրջանում ավելի շատ զբաղվում եմ բուհական և դպրոցական դասագրքերի ստեղծմամբ: Սկզբում փոքր-ինչ թերահավատություն ունեի, որովհետև պետք է լավ իմանաս դպրոցը, մանկավարժական բոլոր մոտեցումները, պետք է դասավանդման լուրջ փորձ ունենաս՝ հասկանալու սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Ես ամենևին էլ այն կարծիքին չեմ, թե մեր դպրոցական դասագրքերն անթերի են, բայց տարեցտարի բարելավվում են: Այն դասագիրքը, որ մենք ենք ստեղծել, թող անհամեստ չհնչի, որոշակիորեն գնահատականի է արժանացել: Նկատի ունեմ հանրակրթական դպրոցի 9-րդ, ավագ դպրոցի՝ 11 և 12-րդ դասարանների դասագրքերը, որտեղ համահեղինակ եմ, նաև բուհական դասագրքերի հեղինակ եմ և համահեղինակ: Բայց պետք է ասեմ, որ այսօր մեր պատմագիտության մեջ ունենք շատ լուրջ խնդիրներ, ցավալիորեն պատմությունը կրկնվում է, և ցավով պիտի ասեմ, որ մենք մեր պատմությունից դասեր չենք քաղում: Ցավում եմ, որ ուսանողների որոշակի հատվածն անհաղորդ է մեր պատմությանը, նաև անտարբեր: Մենք մեր թշնամուն մեր պատմությունը խեղաթյուրելու ավելի լայն հնարավորություն ենք տալիս: Օրինակներից մեկն էլ այն է, որ մեր մի շարք մասնագետներ լուրջ վիճաբանության նյութ են դարձրել Ուրարտուի, Վանի թագավորության խնդիրը, հայ ժողովրդի կազմավորման, տեղանունների և շատ այլ հարցեր, որից օգտվում են թշնամիները:

Մանկավարժությունը չի սիրում կտրուկ փոփոխություններ, ես բնականոն զարգացման կողմնակիցն եմ: Եվ այդ զարգացման մեջ մենք պետք է ավելի շատ դասավանդման մեթոդիկաներին ուշադրություն դարձնենք, նորագույն տեխնոլոգիաներին, և կուզեի, որ մեր պետությունն այնքան զարգանա, որ պետական հոգածության ներքո գտնվեին նաև բուհերը: Բուհը պետք է ունենա ֆինանսական մեծ աջակցություն, որպեսզի կարողանա դիմակայել նորագույն տեխնոլոգիաներին, որպեսզի կարողանա կադրերի ճիշտ ընտրություն կատարել և ավելի մեծացնել խստապահանջությունը: Եթե սրանք չեղան՝ բոլոր ժամանակներում լինելու են լուրջ խնդիրներ: Եվ դրսից վերցրած ցանկացած բարեփոխման հիմքում պետք է հաշվի առնել ազգային առանձնահատկությունը:

100-ամյա բուհի հիմնական առաքելությունն է հայ դպրության պահպանումը, հայոց լեզվի, պատմության և ամենակարևորը՝ ինքնության պահպանումը:

Երկխոսության և համագործակցության նոր փիրույթում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը դեկտեմբերի 22-ին համագործակցության հուշագիր ստորագրեց Հայաստանի պատմության թանգարանի տնօրենի հետ: Հուշագրի ստորագրմանը ներկա էին պրոռեկտորներ Մարիաննա Հարությունյանը, Նաիրա Սաֆարյանը և Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

«Հաճելի է այսօր վավերացնել տարիների գործընկերային, մշակութային, գիտակրթական հարաբերությունները»,-ասաց թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը՝ ընդգծելով, որ երկու ազգային կառույցների գործունեության առանցքները շատ դեպքերում հատվում են կրթության, մասնագիտական զարգացման, գիտության, մշակույթի, մշակութային ժառանգության պահպանման և մեկնաբանման, երկրի զարգացումներին նպաստելու կարևոր առաքելության և տարբեր գործընթացներում:

Թանգարանի տնօրենը փաստեց՝ սա լոկ փաստաթուղթ, հուշագիր չի լինելու, սա իմ հարազատ բուհի և նույնքան հարազատ դարձած թանգարանի գործունեության շաղկապումն է, որ տարիների պատմություն ունի, որի վառ վկայությունն են թանգարանում կամավորական աշխատանքի մեջ ներգրավված ուսանողները: Նաև նրանց ակտիվ աշխատանքի միջոցով թանգարանը պետք է դառնա կրթական կենտրոն:

Հուշագիրը հնարավորություն կտա ազգային, մշակութային ինքնության ժառանգության պահպանման գործում մեկտեղել ջանքերը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց երկուստեք օգտակար նախաձեռնությունը՝ ի նպաստ կրթության, մշակութային պատմական կրթության զարգացումների:

Ռեկտորը վստահ է՝ սա բուհի մի շարք ֆակուլտետների ուսանողների համար սքանչելի միջավայր է՝ կրթական, մշակութային, սոցիալական, սոցիալ-պատմական տեսանկյունից ծանոթանալու հավաքական աշխատանքների, մագիստրոսական թեզերի շրջանակում, որոշակի արտադրական պրակտիկաների ընթացքում իրենց իմացական կարողությունների զարգացման, իրենց մասնագիտական ձեռագրաբանությունը որոշակիորեն հստակեցնելու, պատմական ժառանգությունը արժևորելու համար, ինչը կարող է հասարակական ճգնաժամը հաղթահարելու գործիքակազմ դառնալ:

«Համագործակցությունը կարևորվում է ոչ միայն ուսանողների, այլև դասախոսների համար,-ասաց ռեկտորը՝ հավելելով, որ այդ տեսանկյունից համալսարանի համար սկսվում է երկխոսության ու հաղորդակցման մի նոր փուլ մարդկային պահանջմունքների բավարարման նոր տիրույթում և համատեղ գործունեության շրջանակում»:

Ամփոփելով ռեկտորը մաղթեց, որ նոր համագործակցության սլաքը տանի դեպի խաղաղություն ու ներդաշնակություն:

Համալսարանի ղեկավարները տնօրենի հետ շրջեցին թանգարանում և ծանոթացան «Ինքնության գորգեր» ցուցադրությանը:

Նորը բացելու ակնկալիքով

Բեմի վրա երեք սերունդ խորհրդանշող սովորողներն էին՝ N 57 հիմնական դպրոցի աշակերտուհի Ամելան, Ավագ դպրոց-վարժարանի աշակերտ Գրիգը և Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Վանուհին: Փորձում էին հասկանալ՝ սկզբում աշակե՞րտն է եղել, թե՞ ուսուցիչը, ո՞րն է առաջինը՝ դպրո՞ցը, վարժարա՞նը, թե՞ համալսարանը…

Շուտով հասկանում են՝ ձեռք ձեռքի տված քայլում են դպրոցը, վարժարանը և համալսարանը:

N 57 հիմնական դպրոցի փոքրիկները ներկայացնում են այդ եռամիասնության խորհուրդը, վարժարանի սաները բարձրաձայնում են՝ այստեղ մասնագիտությունների իսկական հրավառություն է: 440 աշակերտ ունեցող դպրոցի շրջանավարտների մեծ մասն ապագա համալսարանականներ են, և վարժարանն այն կամուրջն է, որն աշակերտներին կապում է համալսարանի հետ:

➢6

Շատ բարձր եմ գնահատում...

➢4 24 տարուց ավելի աշխատեցի հանրապետության տարբեր դպրոցներում… Դպրոցում աշխատելու տարիներին ընդունվեցի և ավարտեցի կոնսերվատորիան:

Ամեն մի ժամանակաշրջան իր շունչն ունի: Ինձ թվում է բոլոր ժամանակներում կթության ու դաստիարակության գործին մարդիկ լուրջ են վերաբերվել:

-Եվ Ձեզ հրավիրեցին աշխատելու Երևանի քաղաքային ժողկրթբաժնի մեթոդական կաբինետի վարիչ: Հետագայում այն դարձավ Երևանի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ: Իսկ 1965-ին Ձեզ հրավիրեցին աշխատելու Մանկավարժական ինստիտուտում:

-Այո: Ես աշխատեցի Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկայի ֆակուլտետում, որտեղ երաժշտության մասնագետի կարիք կար: Ես սիրով ընդունեցի այդ առաջարկը: Մանկավարժականի աշխատանքը համատեղում էի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի աշխատանքի հետ: 7 տարի այդ ամբիոնում աշխատելուց հետո տեղափոխվեցի նորաստեղծ՝ գեղարվեստական դաստիարակության ամբիոն, որտեղ էլ 17 տարի աշխատեցի որպես ամբիոնի վարիչ, ապա 11 տարի՝ նորաստեղծ Գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի դեկան:

-Արդեն բավականին ճանապարհ էիք անցել, ունեիք մեծ փորձառություն, Մոսկվայում պաշտպանել էիք թեկնածուականը, արդեն դոցենտ էիք:

Հիվանդության պատճառով չկարողացաք շարունակել, բայց շուտով վերադարձաք՝ Ձեր մասնագիտական հմտություններով ու փորձով ղեկավարելու նեղ մասնագիտական նոր՝ վոկալ-խմբերգային դաստիարակության ամբիոնը. 10 երկար ու ձիգ տարիներ…

-Բայց վարչական աշխատանքը երբեք չի խանգարել իմ դասախոսական աշխատանքին. հիմնականում ես էի դասավանդում երաժշտության դասավանդման մեթոդիկա: Դասավանդում էի 5 առարկա՝ և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում:

-Պարոն Յուզբաշյան, սեպտեմբերին կդառնաք 87 տարեկան, բայց տարիների նույն երիտասարդական ավյունով շարունակում եք աշխատել…Ո՞րն է գաղտնիքը:

-Աշխատում եմ հաճույքով:

-Ովքե՞ր են եղել Ձեր ուսուցիչները և ո՞ւմ եք պարտական Ձեր գիտելիքների և երաժշտության ասպարեզում առաջընթացի համար:

-Իմ ուսուցիչը եղել է Մարտին Մազմանյանը: Նրա մասին հիմա գիրք եմ գրում: 1965-ին, երբ չկային երաժշտության դասագրքեր, ծրագիր, մեթոդիկա, հենց նրա ղեկավարությամբ ստեղծված դասագրքաստեղծ հանձնախմբի մեջ ես ընդգրկվեցի: Մի խումբ ստեղծեցինք ես, Մարտին Մազմանյանը և Գեղունի Չթչյանը, տարրական դասարանների խմբում կոմպոզիտոր Կարո Զաքարյանն էր և երաժշտագետ Հրաչյա Օհանյանը: Մենք ձեռնամուխ եղանք դասագրքերի ստեղծմանը: Դա ինձ համար ամենաերջանիկ տարիներն էին:

-Ձեր դասագրքաստեղծ աշխատանքը բազմաբեղուն է, Ձեր մանկավարժական վաստակի գագաթը…

- Այո: 1967 թվականին սկսեցինք: Երեք սերնդի դասագրքեր ենք ստեղծել: Ես ունեի շատ լավ ուսուցիչներ: Հետագայում ես դարձա դասագրքաստեղծ խմբի ղեկավար: Նաև պաշտպանեցի դոկտորական ատենախոսություն:

-Դուք ստացել եք Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչում, այդ թվում՝ տարբեր պարգևներ: 50-ամյակի կապակցությամբ այն ժամանակ Հայաստանի Լուսավորության նախարարությունը Ձեզ պարգևատրեց Խաչատուր Աբովյանի մեդալով: Ի՞նչ զգացիք, երբ վերջերս, Մանկավարժական համալսարանի 100-ամյակի առթիվ, ստացաք բուհի ամենաբարձր պարգևը՝ «Խաչատուր Աբովյան» մեդալը: Ինչո՞վ է այն Ձեզ համար առանձնահատուկ:

- Արդեն 57 տարի է՝ աշխատում եմ իմ հարազատ բուհում, աշխատում եմ սիրով ու նվիրումով: Շատ բարձր եմ գնահատում այդ պարգևը, որովհետև իմ սիրելի համալսարանում եմ ստացել: Դա շատ պարտավորեցնող է:

Ես երբեք չեմ դադարել աշխատել: Երաժշտական մանկավարժության ասպարեզում արել եմ հնարավորը: Ակտիվ մասնակցություն եմ ունեցել ոչ միայն հանրապետական, այլև միութենական և համաշխարհային գիտաժողովների:

- Ձեր ոլորտում ի՞նչ խնդիրներ կան այսօր:

-Ինձ չի բավարարում դպրոցներում երաժշտական դաստիարակության գործընթացը. բազմիցս գրել եմ ղեկավարներին, որ տարրական դասարանների երաժշտության դասերը տրվի մասնագետներին: Վերջին տարիներին այդ խնդիրը մասամբ է լուծվել:

-Ինչի՞ համար եք ափսոսում:

-Տարեկան 25-30 շրջանավարտ ենք տալիս, բայց նրանցից 2-3-ն են գնում դպրոցում աշխատելու: Երաժշտության դասաժամերն էլ քիչ են՝ շաբաթական 1 ժամ: Ես ափսոսում եմ, որ մենք պատրաստում ենք մասնագետներ, որը չի ծառայում իր նպատակին:

-Որքան տեղյակ եմ, հիմա Դուք աշխատում եք նոր չափորոշիչներով դասագրքերի ստեղծման վրա:

-Այո: Վերջին տարիներին դասագրքեր ենք կազմում երաժշտագետ Ալինա Փահլևանյանի հետ: Այդ գրքերն ունեն QR կոդ: Ինձ հանձնարարել են նոր չափորոշիչներով ստեղծել նոր դասագրքեր: 2-րդ դասարանի դասագիրքն արդեն հանձնել եմ:

Երաժշտությունն առարկան պետք է անցնեն մինչև 12-րդ դասարան, ազգային երգ ու պարը միացրել են երաժշտությանը: Պարի ուղղությամբ մեզ հետ աշխատում է Վերա Ավետիսյանը: Երաժշտության ուսուցիչներց բոլորը չէ, որ պարում են, բայց գոնե QR կոդից երեխաները կօգտվեն:

Շատ կուզեի, որ պարի մեկ դասաժամը տրվեր երաժշտության առարկայի ուսուցմանը:

-Պարոն Յուզբաշյան, կյանքի շատ բեղմնավոր ընթացք եք ունեցել: Կա՞ մի բան, որ դեռ չեք հասցրել անել:

-Այո, երկու մենագրություն եմ սկսել, կուզեի դրանք էլ ավարտել և համարել, որ այս ուղղությամբ ես օգտակար եմ եղել իմ ժողովրդին: Մեկը գիտամեթոդական գիրք է, որը շատ օգտակար կլինի մեր երաժիշտ մանկավարժների հանրությանը՝ «Երեխաների երաժշտական մտածողության զարգացման հիմունքներ»-ն է, որ պետք է մասնակցի մրցույթի:

-Նախկին չափորոշիչները Դուք եք կազմել: Ինչպիսի՞ն են նոր չափորոշիչները…

-Երբ կարդացի՝ սկզբում մի քիչ ըմբոստացա. նախկին չափորոշիչների մեծ մասը պահել են, իսկ նոր փոփոխություններ մտցնելու արդյունքում զարգացման տրամաբանությունը խախտվել է ինձ մոտ նախկինի հետ համեմատած: Նոր գիրքը կազմելիս ես թեմաներն ընտրում եմ՝ հաշվի առնելով երեխաների տարիքային և հոգեբանական զարգացումները: Եվ ոչ միայն թեմաները, նաև զարգացման նույն տրամաբանությունն է տարբեր դասարաններում: Նոր չափորոշիչներում զարգացման թելը կտրել են: Հավելեմ, որ լավ աշխատանք է կատարվել նոր չափորոշիչների ուղղությամբ, մնում է այդ փոքրիկ բացթողումները շտկեն:

-Պարոն Յուզբաշյան, թերևս ամփոփենք: Ձեր աշխատանքային գործունեությունը մշտապես վերընթաց է ունեցել, որին մեծապես նպաստել է Ձեր սերը մանկավարժական և երաժշտական կրթության ոլորտի հանդեպ, աշխատանքային եռանդն ու նվիրումը: Դուք 100-ամյա բուհի պատմության մեծ մասի հաջողությունների ու առաջընթացի մասնակիցն ու ականատեսն եք եղել. ի՞նչ կուզեիք ասել…

-Մեր բուհը շատ շնորհակալ աշխատանք է անում: Մեր համալսարանը առաջնակարգ տեղ է գրավում բարձրագույն կրթական համակարգում:

…Ուզում եմ, որ խաղաղություն լինի և՛ բուհի ներսում, և՛ մեր երկրում:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Քննարկում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետում

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը կազմակերպել էր կլոր սեղան-քննարկում՝ «ԿԱՊԿՈՒ անձանց մանկավարժահոգեբանական աջակցության հիմնախնդիրները» խորագրով: Հրավիրել էին ոլորտի մասնագետների, մասնակցում էր նաև Սան Ֆերնանդոյի Հոգեկան առողջության կենտրոնի կլինիկական հոգեբան Արմինե Ստեփանյան Զամբրեն:

Ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը Արմինե Ստեփանյան Զամբրեին ամփոփ ծանոթացրեց ֆակուլտետի գործունեությանը, ամբիոններին, մասնագիտություններին, նեղ մասնագիտացումներին, կրթական ծրագրերին և դրանց շարունակականությանը: Դեկանն անդրադարձավ ֆակուլտետի միջազգային կապերին, Էրազմուս պլյուս ծրագրի շրջանակում ուսանողների շարժունությանը, ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին, միաժամանակ այդ համատեքստում կարևորեց օտար լեզվի իմացությունը:

Ֆակուլտետի աշխատանքը զարգացման խնդիրների հատուկ կարիք ունեցողների հետ բավականին արդյունավետ է, աշխարհի մակարդավով էլ շատ ծրագրեր են իրականացվում, սակայն դեկանը ցավով արձանագրեց, որ ըստ համաշխարհային առողջապահական կազմակերպության՝ զարգացման կարիք ունեցողների թիվն աշխարհում աճում է:

Սիրանուշ Կարապետյանը կարևորեց զարգացման տարաբնույթ խանգարումներ ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ մասնագետների ստացված փորձի փոխանակումը, ընդգծելով, որ ներկա հանդիպումն էլ նպատակ ունի մանկավարժահոգեբանական տեսանկյունից բացահայտել առկա հիմնախնդիրներն ու գնահատել կարիքները:

Զարգացման խնդիրներով անձանց աջակցության գործում պրոֆեսորը կարևորեց նաև բժշկական բաղադրիչը՝ նշելով, որ համակողմանի մոտեցման դեպքում կլինի ցանկալի արդյունքը:

Դեկան Սիրանուշ Կարապետյանը վստահ է՝ հանդիպումը երկուստեք շահեկան կլինի կողմերի համար՝ ոլորտում առկա մարտահրավերները քննարկելու, նոր մոտեցումներ լսելու և խնդիրների համատեղ լուծումներ գտնելու համար:

Ա. Ստեփանյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի գործունեությանն ու նեղ մասնագիտացումների մասին տեղեկություններ հաղորդելու համար, ներկայացրեց իր մասնագիտական գործունեությունն ու փորձառությունը Լոս Անջելեսի հայ համայնքում, ուր աշխատում է մեծահասակների հետ որպես կլինիկական հոգեբան,ապա խոսեց համայնքի մասին, որտեղ ևս առկա են զարգացման հիմնախնդիրները: Հյուրը նկատեց, որ ֆակուլտետի համագործակցությունը Լոս Անջելեսի հայ համայնքի հետ կարող է երկուստեք շահավետ լինել: Նա կարևորեց ֆակուլտետի մասնագիտությունները՝ վստահեցնելով, որ այստեղի և ԱՄՆ-ի հայ մասնագետները պետք է համագործակցեն թեկուզ հեռավար ձևաչափով՝ օգնելու հայ համայնքի՝ զարգացման հատուկ խնդիրներ ունեցողներին:

Քննարկման ընթացքում աուտիզմ ունեցող երեխաների վախերի ախտորոշման հիմնախնդիրներին անդրադարձավ դոցենտ Ալինա Մանուկյանը, իսկ ներառական կրթության փիլիսոփայական ասպեկտների վերաբերյալ խոսեց դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը:

Մասնագիտական քննարկումն ավարտվեց ակտիվ երկխոսությամբ, ոլորտին վերաբերող խնդիրների շահագրգիռ քննարկումներով ու եզրահանգումներով:

Նորը բացելու ակնկալիքով

➢5 Երեք սերունդ բեմի վրա իմաստավորում է 100-ամյա համալսարանի անցած ճանապարհը, շնորհակալություն հայտնում ուսուցիչներին, որոնք դպրության լույսը վառ են պահում իրենց հոգիներում, ապա փակում Մանկավարժականի 100-ամյա էջը՝ նորը բացելու ակնկալիքով:

Համալսարանական կառույցների ուսուցիչներին բուհի 100-ամյակի առթիվ շնորհավորում է ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, նաև նրանց աշխատանքով պայմանավորում համալսարանի հաջողություններն ու զարգացումները:

Ռեկտորը վստահեցնում է՝ որքան էլ տեխնոլոգիաները զարգանան, աշակերտը փայլող աչքերով պիտի նայի իր ուսուցչին:

Համալսարանի ռեկտորը N 57 հիմնական դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանին մասնագիտական պատրաստվածության, երիտասարդ կադրերի պատրաստման գործում ունեցած ներդրման համար շնորհում է «Մանկավարժական համալսարան» մեդալ, իսկ հիմնական և ավագ դպրոցների մի խումբ ուսուցիչների աշխատանքային գործունեությունը գնահատում պատվոգրերով և շնորհակալագրերով:

«Կրթությունը Սուրբ Ծննդին ընդառաջ»

Օտար լեզուների ֆակուլտետում դեկտեմբերի 23–ին անցկացվեց «Կրթությունը Սուրբ Ծննդին ընդառաջ» խորագրով միջոցառում: Ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Մելիքյանի նախաձեռնությամբ բուհի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումը հոբելյանական տարին ամփոփելու խորհուրդ ուներ: Միաժամանակ ձեռնարկի նպատակն էր համախմբել հայ և օտարերկրյա գիտնականներին, մասնագետներին, ասպիրանտներին, ինչպես նաև դասավանդող և ապագա ուսուցիչներին՝ իրենց փորձը և գաղափարները փոխանակելու լեզվաբանության և դասավանդման մեթոդիկայի ժամանակակից զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնելու իրենց հետազոտության արդյունքները:

Միջոցառմանը մասնակցում էին ֆակուլտետի դասախոսները, մագիստրոսներ, ասպիրանտներ, գործընկերներ, հրավիրյալ դասախոսներ ԵՊՀ-ից և այլ բուհերից, Բրիտանական Խորհրդից, թանգարանների տնօրեններ, «Մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններն ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրում» կրթական ծրագրի մասնակիցներ, ինչպես նաև Բրիտանական խորհրդի առցանց ուսումնամեթոդական հարթակի ֆասիլիտատորն ու ԱՄՆ Պետդեպարտամենտի «Ֆուլբրայթ» ծրագրով հրավիրյալ դասախոսներ:

Միջոցառման առաջին մասը գիտական էր.երկու մասնախմբերում լսեցին տարբեր թեմաներով 14 զեկուցում, որոնք վերաբերում էին լեզվաբանական և գրականագիտական մարդաբանությանը, դասավանդման մեթոդիկային առնչվող խնդիրներին, նաև ուսանողների և շրջանավարտների կատարած հետազոտություններին:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Խաչատրյանը հավելեց. «Քանի որ 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում ուսանողներն ուսումնասիրել են տեսական հնչյունաբանությունը, որոշեցին նոր ձևաչափով ներկայացնել այն. յուրաքանչյուր ուսանող ընտրել է վերոհիշյալ թեմայից մեկ բաժին և ներկայացրել պաստառների միջոցով: Նախաձեռնությունը հետաքրքիր է նաև նրանով, որ պաստառների վրա դրված են QR կոդեր, և ցանկացողները ավելի հանգամանորեն կարող են իմանալ յուրաքանչյուր թեմայի մասին»:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Անիչկա Այվազյանը նշեց, որ պաստառները ներկայացրել են իրենց անցած նյութերի հիման վրա. դրանք վերաբերում են հնչյունաբանության տարբեր բաժիններին:

Հատկապես հետաքրքիր էին իսպաներենի խմբի ներկայացրած նախագծերը, որոնք իրենց ուսանողների կուրսային աշխատանքներն էին. մի խումբ ստեղծել էր խաղ Իսպանիայի երկրագիտության մասին:

Այնուհետև Բրիտանական խորհրդի թրեյներներն անցկացրին վարպետության դասեր՝ վերապատրաստման դասընթացի ձևաչափով:

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը կարևորեց գիտաժողովի անցկացումը՝ ընդգծելով ուսանողական պաստառ-ներկայացումները՝ որպես օտար լեզվի ուսուցման և դասավանդման մեթոդիայի ոլորտում նորարարություն:

Լիագումար նիստում «Պայծառություն չնաշխարհիկ». Սուրբ Ծնունդը հայ թարգմանական մանկագրության մեջ զեկուցումով հանդես եկավ պրոֆեսոր Ալվարդ Ջիվանյանը, իսկ «Եղիշե Չարենցի տուն-թանգարանը՝ բանաստեղծի հիշատակը հավերժացնող նվիրական վայր» թեման՝ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը:

Պրոֆեսոր Կարեն Հայրյանի նախագահությամբ՝ առաջին մասնաճյուղում անդրադարձ եղավ օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի տեսության և պրակտիկայի առկա խնդիրներին ու զարգացման հեռանկարներին, մանկավարժական պրակտիկայի՝ որպես ուսանող-ուսուցիչ անկյունաքար, թուրքերենի ուսուցման մեթոդների գործնական կիրառմանը և այլն:

Երկրորդ մասնաճյուղի աշխատանքները նախագահում էր պրոֆեսոր Ելենա Մխիթարյանը. զեկուցումներ եղան օբյեկտիվ ապացույցների մակդիրների հատուկ հղումով՝ իմացականորեն պայմանավորված դիսկուրսի ճանաչողական ուսումնասիրության, բրիտանական և հայկական հեքիաթներում՝ ժամանակի հայեցակարգավորման, հայերենում՝ իրավաբանական տերմինների բառային միավորների զարգացման վերաբերյալ:

«Տոնածառի զարդարման պոետիկա»-ն ներկայացրեց Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Գոհար Մելիքյանը:

Գիտաժողովի մասնակից, Նյու Յորքի համալսարանի ներկայացուցիչ Վիոլետ Ժանոն ներկայացրեց «Ազատ հոգիների տուն», իսկ Յեյլի համալսարանի մասին ակնարկը՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի «Ֆուլբրայթ» ծրագրով հրավիրյալ դասախոս Ալեքսանդր Բուտովեցկին:

Դեկան Տ. Միքայելյանը պատահական չի համարում, որ գիտաժողովին իր անմիջական մասնակցությունն է բերել անձամբ Բրիտանական Խորհրդի առցանց ուսումնամեթոդական հարթակի ֆասիլիտատոր Մարգարիտ Գևորգյանը:

Մեր օրերում կառույցի՝ անգլերեն լեզվի մշակած մեթոդաբանությունն ամենաարդիականն է, նորարականն ու ճկունը, իսկ անգլերենի դասավանդման փորձի ներդրման առումով՝ լավագույնն են:

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

«Միայն մենք կարող ենք հավերժացնել պահը»

«Կարևորում եմ լուսանկարչությունն այնքան, որ կյանքս չեմ պատկերացնում առանց տեսախցիկի»,-մեզ հետ զրույցում պատմում է ՀՊՄ Կուլտուրայի ֆակուլտետի Գեղարվեստական լուսանկարչության բաժնի ուսանողուհի Արփի Կարապետյանն ու ընդգծում՝ լուսանկարչության հանդեպ սերն ավելի են ամրապնդել Մանկավարժական համալսարանի դասախոսները:

Արփիի կուրսի ղեկավարը Սահակ Տրոյանն է: Նա մեզ պատմեց, որ Արփին միայն գերազանց գնահատականներ է ստացել՝ առաջին կուրսից սկսած: «Իսկ եթե ուզում եք համոզվել, որ նա իրոք արժանի է դրան, ուղղակի նայեք նրա աշխատանքները: Ստեղծագործական աշխատանքներում Արփիի մոտ շատ լավ է ստացվում հատկապես բեմադրված դիմանկարները: Արփին գտել է իր ոճը, և, կարծում եմ, որ կկարողանա զարգացնել այն»:

Մասնագիտական առանձնահատկություններից խոսելով՝ Արփին նկատեց ճանապարհորդությունների և տարբեր իրադարձությունների կենտրոնում լինելու կարևորությունը. «Միայն մենք կարող ենք ներկան հավերժացնել»:

Արփին խոսեց նաև իր լուսանկարների ոճային տարբերության մասին. «Չեմ սիրում, երբ որևէ աշխատանք կարող է նույնիսկ չնչին նմանություն ունենալ մյուսին, յուրաքանչյուր աշխատանք անելիս փորձում եմ նոր ձև, նոր լուծում տալ»:

Պրոֆեսիոնալ լուսանկարիչ, դասախոս Սահակ Տրոյանը ևս փաստեց, որ Արփին յուրահատուկ մոտեցում ունի յուրաքանչյուր նկարին, նա չի անում որևէ աշխատանք պարտադրված, և հավելեց, որ այն ուսանողները, որոնք պարտադրված լուսանկարներ են անում դիպլոմային աշխատանքի համար՝ նրանք այդքանով էլ սահմանափակվում են:

«Այն մարդը, որ ամաչում է տեսախցիկից՝ նա լուսանկարիչ չէ: Տեսախցիկը պետք է լինի քո մի մասնիկը»,- նշեց նա:

«Արփին առանձնահատուկ է թե մասնագիտական կյանքում, և թե իրական»,- պատմում է Արփիի կուրսընկերուհի Սյուզանա Մովսիսյանը: Ըստ նրա, Արփին շատ արագաշարժ է, էներգիայով լի և կարողանում է իր լուսանկարով ընդգծել այնպիսի դետալ, որն իրոք գնահատման արժանի էր:

Արփիի աշխատանքները ցուցադրվում են տարբեր սրահներում, ընդ որում ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզերում. «Առաջիկայում ևս երկու շրջիկ ցուցահանդես կլինի մարզերում, որոնց մուտքն անվճար է»,-տեղեկացրեց Արփի Կարապետյանը:

Նրա երազանքն է ունենալ լուսանկարչության ստուդիա, որտեղ կկարողանա դրսևորել իր հմտություններն ու զարգացնել այդ հիանալի արվեստը:

Շողեր ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հեռուստալրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Արվեստի միջավայրում

Արվեստի միջավայր, գեղեցիկ ձևավորած լսարաններ. քանդակ ու հարթաքանդակ, գեղանկար ու գրաֆիկա. մանկավարժական համալսարանի հեռուստալրագրություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողներն ու կուրսղեկ Դիանա Մարկոսյանը համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում էին:

Այցը տեղեկատվական ու ճանաչողական էր, նպատակը՝ զարգացնել ու ամրապնդել ֆակուլտետների համագործակցությունն ու միջառարկայական կապերը: Ուսանողները դասախոսի և Գեղարվեստական կրթության ֆակուկտետի դեկան Արա Հակոբյանի ուղեկցությամբ շրջեցին ֆակուլտետում, եղան արվեստով ներծծված լսարաններում, արվեստանոցներից մեկում, հետևեցին ապագա արվեստագետներին՝ ուսանողներին, որոնք աշխատում էին իրական բնորդի հետ:

Արա Հակոբյանը կարևորեց ֆակուլտետում կանոնակարգված ու արդյունավետ դասապատրաստում ի-

րականացնելու հանգամանքը, որով պայմանավորված էլ փոխվել են լսարանների դռները. դրանք այսօր թափանցիկ են. ապակիներով լսարաններն ավելի ազատ ու ներդաշնակ մթնոլորտ են ապահովում ստեղծագործող ուսանողների համար, նաև հավելեց, որ լսարան-ցուցասրահներում փակցված նշանավոր արվեստագետների աշխատանքները նպաստում են արդյունավետ լեկցիոն դասընթացներին:

Դասընթաց-շրջայցին ուսանողները եղան այն լսարան-ցուցասրահում, որտեղ ներկայացված էին բացառապես ֆակուլտետում դասավանդած և դասավանդող արվեստագետների աշխատանքները:

Առանձնացված էին գեղանկարներ, քանդակներ, գրաֆիկ աշխատանքներ: Առաջին գործը Արտաշես Քեշիշյանի հարթաքանդակն էր, որն առանձնանում էր իր նյութով և ամիսների կամ գուցե տարիների մանրակրկիտ աշխատանքով: Դեկանի խոսքով՝ արվեստների մեջ ամենաբարդն ընկալվում է կերպարվեստը, որը հարաբերական ոլորտ լինելով՝ տարբեր ոճեր է թելադրում, և յուրաքանչյուրի գնահատումը պրոֆեսիոնալ մոտեցում է պահանջում: Ըստ Արա Հակոբյանի, արվեստաբանի հիմնական խնդիրն է լավերից գտնել լավագույնն ու առանձնացնել, հավելելով՝ միշտ չէ, որ աշխատանքը հեշտ է ստացվում:

Ցուցադրված գործերում կային նաև մաստեխինով արված աշխատանքներ: Պատասխանելով ուսանողի հարցին՝ Արա Հակոբյանը ներկայացրեց մաստեխինի՝ որպես նկարչական գործիքի կիրառման պատմությունը: Դա նկարչական դանակ է, որն ի սկզբանե ստեղծվել է ներկապնակը մաքրելու համար, սակայն հետո օգտագործվել նաև վրձնի փոխարեն:

«Աշխատանքներից յուրաքանչյուրն ունի իր ձեռքբերման պատմությունն ու դժվարությունները, քանի որ արվեստագետներից ոչ բոլորի ժառանգներն էին հեշտությամբ համաձայնում փոխանցել ստեղծագործությունը»,- պատմեց դեկան Հակոբյանը՝ հավելելով, որ երկար ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ այսօր ցուցասրահում հանրաճանաչ արվեստագետների գործեր են:

Դաս-շրջայցի վերջում ֆակուլտետի դեկանը նշեց, որ հունվարին, մեկ օրով ցուցասրահներում ներկայացվելու են հայ դասականների ամենահայտնի ու ճանաչված գործերը:

«Կարծում եմ՝ սա նոր շունչ կբերի ֆակուլտետ, իսկ նման այցերի միջոցով կամրապնդվեն միջֆակուլտետային կապերը»,-ամփոփեց դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստալրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Գեղեցիկի հետքերով

Խաչատուր Աբովյանի անվան հայկական բետական մանկավարժական համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետ առանձնանում է իր հարուստ պատմությամբ և յուրահատկությամբ: Բայց կա մի ֆակուլտետ, որը վստահ կարելի է անվանել ամենաոգեշնչողն ու ամենագեղեցիկը: Եթե հետապնդենք գեղեցիկին՝ կհայտնվենք Գեղարվեստական կրթության ֆակուլտետում, որն իր մեջ է ամփոփում անցյալը, ներկան և ապագան: Ֆակուլտետի միջանցքում մշտապես նոր աշխատանքներ են ցուցադրվում, որոնք զարդարում են համալսարանական առօրյան: Այս պահին ցուցադրված են հոգևոր թեմայով մանրանկարներ, որոնք ստեղծել են համալսարանի շրջանավարտների սաները:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արա Հակոբյանը ոգևորությամբ նշում է, որ ապագայում նախատեսվում է հենց ֆակուլտետում ցուցահանդես կազմակերպել՝ հայ դասականների աշխատանքներով: Արա Հակոբյանը մանրակրկիտ էքսկուրսիա անցկացրեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի նախկին և ներկա դասախոսների աշխատանքներով զարդարված լսարանում: Մտնելով լսարան՝ հայտնվում ես արվեստի գրկում, և թվում է՝ դու էլ դառնում ես արվեստի մաս: Նույնիսկ լսարանի վարագույրներն են արվեստի մեջ թաթախված: Այդ փոքրիկ սենյակում կարծես արտացոլվում են բնությունը, մայրությունը, գեղեցկությունը, իրականությունը, մարդկային արժեքներն ու հույզերը, և հայերիս համար այնքան ցավալի՝ ցեղասպանությունը:

Արա Հակոբյանի խոսքով, լսարանի յուրաքանչյուր աշխատանք ունի իր պատմությունը, և նա միշտ ժպիտով է հիշում դրանք, ինչքան էլ որ խոչընդոտներով լի են եղել այդ պատմությունները: Արվեստանոցում ցուցադրված են Փարավոն Միրզոյանի, Հրավարդ Հակոբյանի, Կարեն Աղամյանի, Լեմս Ներսիսյանի, Ֆաենբերգ Սարգսյանի, Վանանդ Շիրազի, Սևադա Սարգսյանի, Ազատ Հարությունյանի, Նիկոլ Աղաբաբյանի, Արթուր Մար-

տիրոսյանի, Վահագն Ջիվանյանի, Սրապիոն Դանիելյանի ստեղծագործությունները, ինչպես նաև Մելս Ղուկասյանի, Վահրամ Խաչիկյանի, Միսակ Մելքոնյանի և շատ-շատերի գործերը:

Արվեստանոցում ընդամենը մեկ կտավ էր պատկանում կին ստեղծագործողի. դա Լիդա Խանամիրյանի «Երեխաները Արծվանիստից» նկարն է, ինչը Արա Հակոբյանը մեկնաբանեց այսպես. «Կին արվեստագետները քիչ են, բայց որակով»: Նա գտնում է, որ արվեստում կարևորը որակն է, ոչ թե քանակը, մեծությունը կամ ժամանակը:

Լսարանում ներկայացված էր նաև հենց իր՝ Արա Հակոբյանի աշխատանքներից մեկը, որի մասին նա ոչինչ չասաց՝ մնալով իրեն հարիր համեստության մեջ և թույլ տալով, որպեսզի յուրաքանչյուրը յուրովի գնահատի այդ կտավը:

Ընդամենը մեկ ժամվա ընթացքում կարծես ծանոթացանք արվեստի աշխարհի հետ, որն անծայրածիր է, երբեմն ոչ այնքան հասկանալի, բայց միևնույն պահին շատ խորը, զգայուն, մարդկային և իրական: Այդ փոքրիկ «արվեստանոց» այցից հետո գիտակցում ես՝ արվեստը պետք է զգալ, ոչ թե հասկանալ:

Միլենա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Ապրում է մարդը մեր կողքին. Ռազմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Մանկավարժական համալսարանի պաշտոնաթերթի խմբագրություն մտավ մի տղամարդ՝ ԿԳՄՍ նախարարության «Կրթություն» թերթը ձեռքին և խնդրեց արտատպել այնտեղ իր մասին Երևանի N1 տուն-ինտերնատի կողմից գրված նյութը:

Ինձ այնքան չզարմացրեց նյութն այլ թերթից վերատպելու գաղափարը, որքան բովանդակությանը ծանոթանալուց հետո իմանալը, որ 81 տարեկան Ռազմիկ Աբրահամյանը Մանկավարժականի գերազանց շրջանավարտ է, այլև ավարտել է ասպիրանտուրան և ծավալել մանկավարժական գործունեություն:

Տարիներ առաջ երկրաշարժը խլել է նրա կնոջ կյանքը, իսկ ինքը որոշ ժամանակ Գյումրիում աշխատելուց հետո տեղափոխվել է Երևան, բնակվել հանրակացարանային բնակարանում, որը հետագայում տրամադրել են երկու երեխա ունեցող մեկ այլ ընտանիքի: Այսպիսով երկարամյա դասախոսն ու ուսուցիչը հայտնվել է Երևանի N 1 տուն-ինտերնատում:

Աշխատանքի ծարավը

Ռազմիկ Աբրահամյանը շուրջ 10 տարի է՝ բնակվում է Երևանի №1 տուն-ինտերնատում: Լինելով երկարամյա բնակիչ, նա ջանք չի խնայում խնամյալների օրը ուրախ ու նպատակասլաց անցկացնելու համար: Որպես լավ մարդ՝ ազնիվ ու բարի, որպես ընկեր՝ հավատարիմ, նա չի զլանում սահմանափակ շարժումներ ունեցող խնամյալներին իր օգնության ձեռքը մեկնել: Ոմանց համար խանութից մթերք և այլ պարագաներ է գնում, շատերի համար լավ խորհրդատու է, զրուցալից ընկեր, փորձում է ընկերների կյանքը դարձնել ուրախ ու հետաքրքիր…Այդպիսի ընկերներից են՝Ռազմիկը, Ժորան, Հայկարամը, Տիգրանը և շատ ուրիշներ, որոնք գոհունակությամբ են արտահայտվում երկար տարիներ ուսուցիչ և դասախոս աշխատած Ռազմիկի մասին:

1965 թվականին Երևանում ավարտելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը՝ նա իր կյանքը նվիրեց մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը, սկզբում Գյումրիում, ապա Երևանում: Գերազանց ավարտելով նույն բուհի ասպիրանտուրան՝ հրավիրվեց Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան՝ որպես ավագ դասախոս, մի շարք միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրա սաներից շատերը դարձել են լեզվի և գրականության ուսուցիչներ:

Նա այսօր էլ զբաղվում է հասարակական գործունեությամբ: Մամուլում հանդես է գալիս բազմաբնույթ հոդվածներով, բազմիցս մասնակցել է հանրապետական և միջազգային մանկավարժական ընթերցումների:

Ռազմիկ Աբրահամյանը «Ժողկրթության գերազանցիկ» է, ավագ մեթոդիստ, արժանացել է ստեղծագործ և հետազոտող ուսուցչի կոչման:

Կյանքի 80-րդ գարունն է բոլորել մեր լավ ընկերը և շարունակում է շրջապատված մնալ հոգատարությամբ և ջերմ սիրով:

Նա շարունակում է ապրել ակտիվ կյանքով և իր լավատեսությունն ու փորձը փոխանցել մյուս խնամյալներին:

Երևանի N 1 տուն-ինտերնատ
«Կրթություն», 30.11.2022 թ.

Նելլի Պետրոսյանը Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի ուսանող է: Գրում է գողտրիկ հեքիաթներ, որոնցից մեկը՝ «Ծիրանենին», ներկայացնում ենք մեր ընթերցողներին:

Ծիրանենին

Սաղարթախիտ անտառում արդեն գարուն էր: Ամեն մի ծառ հիանում էր իր նորածիլ բողբոջներով: Նրանց մեջ կար մի փոքրիկ Ծիրանի ծառ, որը նայելով այդ հսկա ծառերին, երազում էր շուտ մեծանալ և հասնել նրանց. չէ՞ որ անտառում շուտով անցկացվելու էր Ծառահանդես, իսկ իր հասակը կարճ էր՝ նման հանդեսի մասնակցելու համար: Նա շատ է խնդրում հանդեսի կազմակերպչին՝ Կաղնուն, որ իրեն նույնպես թույլ տա մասնակցել այդ գեղեցիկ միջոցառմանը:

Համառ էր Կաղնին և չէր ցանկանում որպես մասնակից ներկայացնել փոքրիկ, երազկոտ Ծիրանենուն:

- Ախր մինչև Ծառահանդես դեռ շատ ժամանակ կա, ես կհասցնեմ մեծանալ այդ ընթացքում և Ձեզ հուսախաբ չեմ անի,- կմկմալով արտաբերեց Ծիրանենին:

- Կորի՛ր, փոքրիկ, անպիտան տնկի: Նույնիսկ մի կարգին խոսել չես կարողանում, ուր մնաց թե մասնակցես նման մրցույթին: Դու գոնե պատկերացնո՞ւմ ես, թե ինչ շքեղակազմ ծառեր են մասնակցելու Ծառահանդեսին: Դու նրանց կողքին մի փոքրիկ ճյուղիկի ես նման:

- Խնդրում եմ, հորեղբայր Կաղնի, թույլ տվեք մասնակցել: Խոստանում եմ ամեն բան անել, շատ ջուր խմել, արեգակի լուսավոր շողերի տակ անընդհատ խաղալ, միայն թե շուտ մեծանամ:

-Լավ, փոքրիկ, համառ «ճյուղիկ»: Տեսնում եմ՝ շատ ես ուզում մասնակցել: Քեզ կտամ մասնակցելու հնարավորություն: Բայց հետո ինձ չմեղադրես, եթե արժանանաս հպարտ, գեղեցիկ ու արժանավայել հասակ ու փարթամություն ունեցող ծառերի ծաղրանքին:

Կաղնու հետ ունեցած խոսակցությունից հետո մոտ երկու ամիս էր անցել, և արդեն հասել էր այն երանելի պահը, որ պետք է տեղի ունենար երկար սպասված Ծառահանդեսը:

Անտառի գեղեցկուհիներն ուղղակի փայլում էին իրենց շքեղ, շա՜տ գեղեցիկ ծաղկած տեսքով ու փարթամ ճյուղերով: Մտածում էր Կաղնին, թե նրանցից ով է արժանի «Անտառի գեղեցկուհի» տիտղոսին, երբ հանկարծ մի շատ ծանոթ կմկմոց լսվեց.

- Հորեղբայր Կաղնի…

Կաղնու առջև կանգնել էր մի փոքրիկ, բայց այնքա՜ն գեղեցիկ, ծաղկած Ծիրանենի: Նրա մանրիկ, ճերմակ ծաղիկներից փոքրիկ ծառը նորահարսի տեսք էր ստացել:

- «Ճյուղի՜կ», այդ դո՞ւ ես,- զարմացած հայացքով հարցրեց Կաղնին:

- Այո՛, ես եմ,- ամոթխած հայացքը գետնից չկտրելով՝ պատասխանեց Ծիրանենին:

- Աչքերիս չեմ հավատում, հապա մոտ արի, փոքրիկ:

Ծիրանենին մոտ եկավ, բոլորն աչքերը չորս արած նայում էին այդ փոքրիկ հրաշքին: Իսկ Կաղնին, առանց երկար-բարակ մտածելու, «Անտառի գեղեցկուհի» տիտղոսը հանձնեց մեր համեստ, բայց իր շքեղությամբ փայլող Ծիրանենուն:

Ասեղնագործ աշխատանքի ցուցահանդես

Հովհաննես Թումանյանի թանգարանի, «Զարդ» մշակութային ՀԿ-ի և Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի միջև կնքված պայմանագրի շրջանակում Գեղարվեստական կրթության ֆակուլտետում բացվել էր հայկական ասեղնագործությանը նվիրված ցուցահանդես, որտեղ ուսանողները ներկայացրել էին պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքները:

Հին և նոր

Էլեկտրոնային հարթակում բացվել է «Հին ու նոր» խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես:

«Նպատակն էր ցույց տալ հնի և նորի կապը, որովհետև եթե դու չունես պատմություն, արմատներ, անցյալ, ապա նորը ինչի հետ պետք է կամրջվի»,- ասում է Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի դասախոս Արմեն Խաչատրյանը, ում մտահղացմամբ ու նախաձեռնությամբ էլ բացվել է ցուցահանդեսը:

Դասախոսը նկատում է՝ այսօր ընտանիքներում կան ալբոմներ, զուգահեռ թվային լուսանկարչության աշխարհն է:

«Google հարթակում մենք ցուցադրեցինք լուսանկարչական աշխատանքներ, այնուհետև մտածեցինք ընդլայնել այն: Արդեն ունենք 28 աշխատանք, որտեղ համադրված են հինն ու նորը: Դա շատ հետաքրքիր է: Ուսանողների հետ մեր աշխատանքը բավականին լավ արդյունք տվեց:

Լուսանկարներում կարող եք տեսնել բուհի դասախոսին, որևէ աշխատակցի տարիներ առաջ և հետո. դա համեմատելու, ինչու չէ, նաև խորհելու առիթ է տալիս, ցույց տալիս յուրաքանչյուր մարդու պատմությունը, արժևորում միջավայրը: Մեր նպատակն է ցույց տալ սկիզբը, որտեղից նա եկել է: Ուսանողը դա պետք է իր միջով անցկացնի, հասկանա ու սիրի այն կրթօջախը, որն իր համար ընտանիք է: Դա շատ լուրջ միջավայր է»,-ասում է դասախոս Արմեն Խաչատրյանը:

Ցուցահանդեսում ներկայացված աշխատանքների մեծ մասն արել են ուսանողները, կան նաև համալսարանի արխիվից վերցրած լուսանկարներ:

Էլեկտրոնային կրթության բաժնի միջոցով ստեղծվել է QR կոդով ցուցահանդեսային հարթակ, ուր յուրաքանչյուրը կարող է ոչ միայն տեսնել լուսանկարը, այլև ծանոթանալ նրա պատմությանը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 28.12.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ